դէմ յառնեն. դուք խղճի մտօք գրելով՝ ձեր պարտքը կը վճարէք. նոքա եւս իրենցը, երբ ձեր կասկածն իրականացնեն. լուսոյ եւ խաւարի, ճշմարտութեան և ստութեան, առաքինութեանց և մոլութեանց պատերազմ մը կայ ու կայ ստեղծագործութենէն ի վեր և յաւիտեան պիտի մնայ, քանի որ աշխարհ կայ, և անոր մէջ մարդ։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ

Ներկայ տարւոյս Մարտ ամսոյ մէջ ի Բեթլեհէմ զարմանալի ծնունդ մի եղած է մեր ազգայնոյ միայն։ Երեխան ծնած օրէն կաթի (1) երկու ակռայ ունի եղեր։ Լսածնուս նայելով յիշեալ մանկան ծնողքը ասկէ առաջ տասնի չափ զաւակներ ունեցած են, բայց ամենն ալ հաղիւ 8–10 օր կ'ապրին եղեր։ Իսկ երկու ակռաներով ծնուածը այսօր հինգ ամիս է, որ կ'ապրի. և կը պատմեն, որ առոյգ կազմած եւ գեղեցիկ կերպարանք մի ունի, այնպէս որ Բեթլեհէմի ամեն ազգէ բնակիչք մեծ մասամբ անխտիր մանկան վերայ մեծ համակրութիւն և սէր ունին։

— 12 ին Ամենապատիւ Ս. Պատրիարքը իբրեւ օգափոխութիւն բժշկաց խորհրդով Յոպպէ ելաւ, ուր կը գլխնուի մինչեւ ցայսօր։

— 14 ին Գերմանացի 14 տարեկան տղայ մը 16 տարեկան Հրէայ տղու մը ընկերութեամբ ժամը երեկոյեան 11 ին միջոցները շրջագայելու կ'երթան մինչև Յոպպէի Ճանապարհին վերայ եղած Բ. պահապանոցը, ուր հանգստանալու համար սակաւ ինչ կը նստին։ Գերմանացին քովը գտնուած փոքրիկ ատրճանը հանելով՝ որ լեցուն եղած է միայն վառօթով, կուզէ պարպել, բայց չառներ վառօթը. քանիցս պարպել փորձելէն յետոյ, ատրճանակի բերանը իրեն բերնին մէջ առնելով կը փչէ, որով յանկարծ կը պարպուի բերնին մէջ և տղան գետինը կը փռուի չարաչար տանջուելով. Հրէայ տղան որպէս թէ իւր ընկերը սոսկալի չարչարանքէ մը ազատելու համար քովը գտնուած զմելինով Գերմանացի տղուն գլուխը կը կտրէ և քարերու տակ կը պահէ. յետոյ կ'երթայ մեռեալ տղուն ընտանեաց կը յայտնէ եղած մահը. նոքա եւս Հիւպատոսարանի միջոցաւ ոստիկանութիւն կը հաղորդեն։ Թուղարկութեան ժամանակ Հրէայ տղայն սպանեալին գլուխն ուր ըլլալը կը պահէ, բայց յետոյ կը խոստովանի։ Բժիշկները գլուխը քննելով՝ կը յայտնեն, որ վառօդը մինչեւ ըղեղն հասած է և հետեւաբար վերքն անբուժելի։ Բայց Հրէայ տղայն մինչեւ հիմա բանտն է։

— 19 ին երեկոյեան 12 ի ատենները Պօլսէն եկած հեռագիրը Սուլթան — Ա.ՊՏԻԼ — ՀԱՄԻՏԻ Գահակալութիւնը աւետեց. հետեւեալ օրը Կառավարութեան պալատին մէջ կարդացուեցաւ հեռագիրը պաշտօնական անձանց ներկայութեան։ Մեր վանքէն ներկայ էր Գեր. Իսահակ Աբքեպիսկոպոսը իբրև փոխանորդ Ս. Պատրիարքի, ընկերակցութեամբ երկու այլ Եպիսկոպոսաց եւ վանուցս Աւագ Թարգմանին։ Երեք դիշեր Քաղաքիս մէջ Ճրագավառութիւն եղաւ Օգոստափայլ Սուլթանին երջանիկ Գահակալութեան առթիւ. խաղաղաւէտ և բարեբաստիկ օրեր կը մաղթեմք։

(1) Տղայոց առջեւի քսան ակռաներն, որոնք կաթով մեծցած ժամանակ կը սկսին բուսանիլ, կաթի ակռաներ կ'ըսուին. բայց ընդհանրապէս մարդկանց ակռաներն երեք կարգ կը բաժնուին։ Ամեն մէկ ծնոտին վերայ շորսական կտրոց կամ առջեւի, երկական շան կամ կոշմնակաց, և տասնական աջոյրեաց կամ ջերջնական ակռաներ կան, որոնք ամենը երեսուն երկու հատ են։

digitised by A.R.A.R.@